# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ — ԲԵՄԱԿԱՆՔ

● *Կիր. 1 Օգոստ.*— ՎԱՐԴԱՎԱՌ (Տօն Այլակերպութեան Տեառն)։ *Ամեն. Պատրիարք Ս. Հայրը մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ եւ կուսակրօն քահանայ ձեռնադրեց Ընծայարանի եռամեայ ընթացքը աւարտած Բարշ. Յովհաննէս Սրկ. Այվազեանը, վերակոչելով զինք* Տ. Արշէն Աբեղայ։ *Ս. Պատարագէն եւ ձեռնադրութեան խորհուրդէն մաս մը ձայնասփռուեցան Յորդանանի Ռատիոկայանէն։ Ս. Պատարագէն ետք, «Օրհնեցէք զՏէր» Ս. Աթոռոյ չարականի երգեցողութեամբ Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարան։*

*— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Անդաստան», նախագահութեամբ Գերշ. Տ. Նորայր Եպս.-ի։ Իսկ ժամերգութեան աւարտին՝ Ամեն. Պատրիարք Ս. Հայրը կատարեց վեղարի տուչութիւնը նորընծային։*

● *Բշ. 2 Օգոստ.*— Յիշատակ մեռելոց։ *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Արժ. Տ. Կարապետ Քհնյ. Անդրէասեան։ Ս. Պատարագէն ետք կատարուեցան հոգեհանգստեան կարգեր, նախ Մայր Տաճարին մէջ եւ ապա դուրսը՝ Երանաշնորհ Տ. Կիւրեղ Պատրիարքի շիրիմին վրայ, նախագահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.-ի։ Նոյնը կատարուեցաւ Ձոր-Թաղի գերեզմանատան մէջ, նախագահութեամբ Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբրիէլեանի։*

● *Ուր. 6 Օգոստ.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.։*

● *Շբ. 7 Օգոստ.*— Ս. Թադէոսի առաքելոյն եւ Սանդխտոյ կուսին։ *Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վաչէ Վրդ. Իգնատիոսեան։*

● *Կիր. 8 Օգոստ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վաղարշ Աբղ. Խաչատուրեան։*

● *Շբ. 14 Օգոստ.— Այսօր սկսաւ Ս. Կոյսի Վերափոխման տօնը կանխող ամէնօրեայ հանդիսաւոր Ս. Պատարագներու մատուցումը Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ։*

● *Կիր. 15 Օգոստ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Վաղարշ Աբղ. Խաչատուրեան։ Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ «Խաղողօրհնէք»ի արարողութիւն, նախագահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.-ի։*

● *Կիր. 22 Օգոստ.*— Բարեկենդան Ս. Աստուածածնի պահոց։ *Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ։ Ժամարարն էր հիւրաբար Ս. Աթոռ գտնուող Պաղտատի Առաջն. Փոխանորդ Արժ. Տ. Գեղամ Քհնյ. Փաշայեան։*

● *Ուր. 27 Օգոստ.— Նորընծայ Հոգշ. Տ. Արշէն Աբղ. Այվազեան իր անդրանիկ Ս. Պատարագը մատոյց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ։*

*— Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատրան մէջ։ Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.։*

● *Շբ. 28 Օգոստ.*— Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի։ *Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատրան մէջ։ Ժամարարն էր նորընծայ Հոգշ. Տ. Արշէն Աբեղայի վարժիչն ու ուսուցիչը՝ Հոգշ. Տ. Արշակ Աբղ. Խաչատուրեան։ Ըստ սովորութեան, նորընծան կը սպասարկէր Ս. Խորհուրդին։*

*— Կէսօրէ ետք ժամը 3-ին, Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժերով իջաւ Գեթսեմանի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու Վերափոխման մեծահանդէս նախատօնակը։ Իրիկնադէմին, նոյն եկեղեցիին մէջ կատարուեցան «Ընկեցէք»ի եւ Հսկման կարգեր, ու ապա գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւններ, որոնք տեւեցին մինչեւ գիշերուան ժամը տասնմէկ։ Այս արարողութեանց նախագահեց Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբրիէլեան։*

● *Կիր. 29 Օգոստ.*— ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ։ *Առաւօտեան ժամը 7·30-ին, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.-ի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանի ձորը, «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ անոր յաջորդող «Անդաստան»ին նախագահեց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը։*

digitised by A.R.A.R.@

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ «Անդաստան», երեկոյեան ժամերգութիւն եւ Նախատօնակ։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպս.։

● Բշ. 30 Օգոստ.— Յիշատակ մեռելոց։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ Ժամարարն էր Արժ. Տ. Գեղամ Քհնյ. Փաշայեան։ Ս. Պատարագէն ետք Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբրիէլեանի գլխաւորութեամբ կատարուեցան հոգեհանգստեան կարգեր, նախ Մայր Տաճարին մէջ, ապա գաւիթը՝ Երանաշնորհ Տ. Կիւրեղ Պատրիարք Հօր շիրմին վրայ, եւ ամենէն ետք Ջամ–Թաղի գերեզմանատան մէջ։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Դշ. 11 Օգոստ.— Ն. Վեհ. Հիւսէյն Թագաւորի Գահակալութեան 13–րդ տարեդարձին առիթով, Պատրիարքարանէս շնորհաւորական հեռագիր մը յղուեցաւ Ամմանի Արքունիք։

● Եշ. 12 Օգոստ.— Ն. Վեհ. Հիւսէյն Թագաւորի կողմէ, կեդրոնական նամակատան շէնքին մէջ ինքնագործ հեռաձայնի բացման հանդիսութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. եւ Տիար Կարպիս Հինդլեան։

● Ուր. 13 Օգոստ.— Ս. Քաղաքիս Կառավարչին կողմէ, Սուտանի Ումմէ Կուսակցութեան հոգեւոր պետ՝ Իմամ Էլ Հատի Էլ Մահտիի ի պատիւ, ԻՆԹԸՐՔՕՆԹԻՆԷՆԹԸԼ պանդոկի մէջ տրուած ճաշկերոյթին ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. եւ Տիար Կարպիս Հինդլեան։

● Եշ. 19 Օգոստ.— Դարձեալ Ս. Քաղաքիս Կառավարչին կողմէ, Սուտանի Գերագոյն Խորհուրդի անդամ Ապտալլա Էլ Ֆատէլ Էլ Մահտիի ի պատիւ, ԻՆԹԸՐՔՕՆԹԻՆԷՆԹԸԼ պանդոկի մէջ տրուած ճաշկերոյթին ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. եւ Տիար Կարպիս Հինդլեան։

● Ուր. 20 Օգոստ.— Իրաքի Հայոց Առաջն. Փոխանորդ Արժ. Տ. Գեղամ Ա. Քհնյ. Փաշայեան Պաղտատէն հիւրաբար ժամանեց Ս. Աթոռ։ Մեկնեցաւ Երկուշաբթի, 13 Սեպտեմբերին։

# ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԱԲԵՂԱՅԻ

Օգոստոս մէկի Կիրակին, Վարդավառի տօնը, ըստ Հին Տօմարի, անգամ մը եւս հոգեւոր կրկնակ խրախճանքի օր մը եղաւ Ս. Աթոռոյս համար, որովհետեւ այդ հանդիսաւոր առիթով, քահանայական աստիճան եւ վեղարի օրհնութիւն ստացաւ Ս. Աթոռոյս Ընծայարանի շրջանը աւարտած Բարշ. Յովհաննէս Սրկ. Այվազեանը։

Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ ձեռնադրութիւնը կատարեց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, իսկ խարտաւիլակն էր Լուսարարապետ եւ Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան։

Ընծայեալը շաբաթ մը առաջ ինքնակամ յօժարութեամբ յայտնած էր արդէն իր փափաքը՝ ընդգրկելու կուսակրօն եկեղեցականութեան ասպարէզը. անձնուիրաբար ծառայելու Հայց. Եկեղեցիին, Հայ ժողովուրդին եւ մանաւանդ իբրեւ Միաբան այս Տան՝ որուն կը պարտի իր ամբողջ պատրաստութիւնը։

### ԿՈՉՈՒՄ

Յուլիս 31-ի երեկոյեան, Վարդավառի հանդիսաւոր նախատօնակէն յետոյ, սկսաւ կոչման արարողութիւնը։ Ընծայեալը տրտմանուշ եւ յուզուած, ճեղքելով ժողովուրդի բազմութիւնը, յառաջացաւ եկեղեցիի արտաքին դուռնէն դէպի խորանը, «Նայեա ի մեզ» շարականի եղեւէջներուն ընդմէջէն։ Յետոյ, կարծես խորհրդաւոր ատեանի մը առջեւ, ի ներկայութեան Միաբանութեան դասուն եւ հաւատացեալ ժողովուրդին, ան ըրաւ իր հաւատքին ու դաւանութեան խոստովանութիւնը։

### ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ս. Պատարագի սկիզբը լեցուած է Մայր Տաճարը։ Պատարագիչ Պատրիարք Սրբազանը ընծայի պատրաստութենէն յետոյ կը խնկարկէ ու կը բարձրանայ Ս. խորան։ Օրուան ճաշու շարականէն յետոյ երկու Միաբան հայրեր՝ Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. եւ Հոգշ. Տ. Տաթեւ Աբղ., կը սկսին սաղմոսել, ազդանշան տալով ձեռնադրութեան խորհուրդի սկզբնաւորման։

Ընծայեալը բեմ կը բարձրանայ ծանրագնաց. ձախակողմեան սանդուխէն։ Պատարագիչ Պատրիարք Ս. Հայրը բազմած է Սեղանին աջակողմը, շրջապատուած տօնթերակայ վարդապետներէ, սարկաւագներէ, ուրարակիրներէ։ Հակիրճ հարցափորձէ մը վերջ, խարտաւիլակ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ

digitised by A.R.A.R.@

Արքեպս. կ'երաշխաւորէ ձեռնադրուողին արժանիքը. ապա այս վերջինը ծնրադիր կը մօտենայ ձեռնադրող Ամենապատիւ Սրբազանին, որ անոր վրայ կը դնէ իր աջը ու կը կարդայ խորհրդաւոր աղօթքը: Քանի մը վայրկեան եւս եւ ահա ան դարձած է դէպի ժողովուրդը, ծնրադիր եւ ձեռնամբարձ, հանդիսաւորելով աշխարհէն իր հրաժարումին ուխտը, մինչ եկեղեցական դասը երիցս կ'երգէ «Աստուածային եւ երկնաւոր շնորհ...» սրտագրաւ շարականը, եւ դպիրները յանուն ժողովուրդին կը պատասխանեն «Արժանի է»: Յուզումը կը ծփայ բոլոր դէմքերուն վրայ. արարողութեան ամենէն խորհրդաւոր պահերէն մին է. անոնք որ կը հասկնան նուիրումի եւ զոհողութեան այս կեցուածքին իմաստը, կը ներխառնուին ձեռնադրուողի զգացումներուն: Ապա ընծայեալը կը դառնայ դէպի Ս. Սեղանը, եւ ծունկի՝ իր հոգեւոր ծնողքին առջեւ, որ անոր վրայ կը դնէ իր աջը. «Ես զձեռն ձեռս ի վերայ սորա...». յետոյ ուրարը հանելով ուսէն կ'անցընէ անոր պարանոցը, իբրեւ «Լուծ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Ձեռնադրութիւնը կ'ընդհատուի պահ մը, կը շարունակուի Ս. Պատարագը, կը կարդացուին Գիրքն ու Աւետարանը եւ կը կատարուի ընծայից վերաբերումը:

## ՕԾՈՒՄ

«Ողջոյն»էն առաջ կը վերսկսի խորհուրդը. Նորընծան, ծնրադիր, դարձեալ կեցած է ձեռնադրողին առջեւը, որ անոր վրայ կը կարդայ շնորհաբաշխութեան աղօթքները, որմէ յետոյ անոր կը յանձնէ, տուչութեան ուրոյն օրհնութիւններով՝ փիլոն, սաղաւարտ, շուրջառ, վակաս, գօտի, եւ Ս. Պատարագի զգեստաւորման այլ բոլոր մասերը: Դպիրները կ'երգեն Նորընծայի առաջին «Խորհուրդ խորին»ը, իսկ վարագոյրի բացումին՝ ան արդէն զգեստաւորուած կանգնած է բեմին վրայ: Ժամն է օծումին, որ նշանակն է ընծայեալին Ս. Հոգիով դրոշմուելուն: Խորան կը բերուի Ս. Միւռոնը, կ'երգուի Հոգւոյն Սրբոյ իջման շարականը՝ «Առաքելոյ աղաւնոյ», երիցս հեղլով սուրբ իւղը ոսկեայ ընդունարան ափի մը մէջ: Յետոյ օծման արարողութեան ամենէն սրտագրաւ պահը, եւ անուանափոխութեան արթնցուցած հետաքրքրութիւնը: Պատրիարք Սրբազան Հայրը մի առ մի կ'օծէ նորընծային ճակատն ու աջ եւ ձախ ձեռքերը, ճակատը սրբալոյս Միւռոնով դրոշմած ատեն տալով անոր նոր անունը՝ Արշէն: Կը կատարուի նոյնպէս վերջին տուչութիւնն ալ, իշխանութիւն՝ մատուցանելու Ս. Պատարագ: Ձեռնադրողը նորընծային կը յանձնէ Քրիստոսի կենարար մարմինն ու արիւնը կրող սկիհը: Կը վերջանայ խորհուրդը եւ կը վերսկսի Ս. Պատարագը: Սարկաւագը կը ձայնէ «Ողջոյն տուք միմեանց», Պատրիարք Սրբազանը կը համբուրէ իր ձեռնասունին օծեալ ճակատը, իրեն կը հետեւին բոլոր հոգեւորականները, որոնք իրենց կարգին ժողովուրդին կը փոխանցեն ընծայեալի ողջոյնին անդրանիկ օրհնէնքը: Իսկ ժողովուրդը յաւարտ Ս. Պատարագի մօտեցաւ նորընծային աջը առնելու, երբ ան դասին մէջ լռելեայն կը վերծանէր իր առջեւ բացուած Ս. Աւետարանը:

## ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՎԵՂԱՐԻ

Կիրակի երեկոյեան ժամերգութենէն յետոյ, տեղի ունեցաւ աբեղայական վեղարի օրհնութեան կարգը: Վեղարի այս օրհնութիւնը կը կատարուի յատուկ կանոնի մը համեմատ, որ թէեւ պարզ, բայց շատ սրտառուչ արարողութիւն մըն է: Աբեղայութիւնը կարգ մը կամ աստիճան մը չէ, այլ կուսակրօն քահանայութիւնը, իսկ վեղարը այն քօղն է, զոր երբեմն կը գործածէին վանական հոգեւորականները: Աբեղայութիւնը այժմ բնականօրէն դարձած է կուսակրօն կամ վանական քահանայութեան առաջին փուլը:

Պատրիարք Սրբազանը պատշաճ աղօթքներէ, ընթերցումներէ եւ շարականներէ վերջ հանեց անոր գտակը եւ շնորհազարդեց անոր գլուխը վեղարով:

Նորընծան իր քառասունքի շրջանը անցուց Ս. Յարութեան Տաճարին մէջ, բերելով իր մասնակցութիւնը գիշերային արարողութեանց: Իր վարժիչն ու ուսուցիչը եղաւ Հոգշ. Տ. Արշակ Վրդ. Խաչատուրեան:

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ՏԷՐ ԱՐՇԷՆ ԱԲԵՂԱՅ ԱՅՎԱԶԵԱՆ, նախկին անունը՝ Յովհաննէս, ծնած է 1945 Յունուար 5-ին՝ Պէյրութ: Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրի Արգարեան ազգային վարժարանին մէջ, որուն Ե. Դասարանը աւարտելէն անմիջապէս ետք ժառանգաւոր սան արձանագրուած է 1956-ին: 1961-ին աւարտած է ուսման ընթացքը եւ ստանալով ուրար՝ անցած է Ընծայարանի բաժինը: 1963 Յուլիս 13-ին ձեռնադրուած է Սարկաւագ՝ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.էն, շարունակելով իր ուսումը Ընծայարանի մէջ:

ՍԻՈՆ կը մաղթէ որ նորընծան ըլլայ «մշակ անանց ամօթոյ», արգիւնաւորելով իր սրբազան կարգը ի փառս Հայց. Ս. Եկեղեցւոյ եւ մեր բազմաչարչար ժողովուրդին:

## ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ

30 Յուլիս, Ուրբաթ երեկոյեան, Տաղաւարի տօնին նախատօնակէն ետք, Մայր Տաճարի կից Ս. Էջմիածնի մատրան մէջ, կատարուեցաւ սարկաւագական կոչման արարողութիւնը Ս. Աթոռոյս ժառ.

digitised by A.R.A.R.@

# ՅՐԱՒԻՐԱԳԻՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչական ժողովը պատիւ ունի հրաւիրելու Միութեան բոլոր իրաւասու անդամները ներկայ գտնուելու 52-րդ Ընդհ. ժողովին, որ պիտի գումարուի Շաբաթ օր, 4 Դեկտեմբեր 1965, առաւօտեան ժամը 9.30-ին, Միութեան Կեդրոնական Գրասենեակին մէջ, 109 Իսթ 40-րդ Փողոց, Նիւ Եորք, Ն. Ե.:

Եթէ օրինական մեծամասնութիւն մը ներկայ չըլլայ վերոյիշեալ թուականին, այս ծանուցումը պիտի նկատուի իբրեւ երկրորդ հրաւէր Ընդհանուր ժողովի, որ պիտի գումարուի Շաբաթ եւ Կիրակի, 11 եւ 12 Դեկտեմբեր 1965, առաւօտեան ժամը 9.30-ին, Սթէթլըր Հիլթըն պանդոկին մէջ, Սեվընթ Էվընիւ եւ 33-րդ Փողոց, Նիւ Եորք 1, Ն. Ե.:

Այն բոլոր իրաւասու անդամները որ ներկայ պիտի ըլլան այս ժողովին, օրինական մեծամասնութիւն պիտի կազմեն:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ընդհանուր Տեղեկագիր 1964 Տարեշրջանի:
2. Ընդհանուր Հաշուետուութիւն 1964 Տարեշրջանի:
3. Ընտրութիւն Կեդր. Վարչ. ժողովի՝ իրենց պաշտօնավարութեան շրջանը աւարտած անդամներու տեղ:
4. Առաջարկներ եւ Թելադրութիւններ:
5. Դնահատանիք Բանաձեւեր:

ԻՆԴԻՄԱՑ ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ

Ատենապետ — Ատենադպիր

Մ. Մ. ՑՈՎՍԷՓԵԱՆ — Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Նիւ Եորք, 1 Սեպտ. 1965

---

վարժարանի ընթացքը բոլորած եւ տարի մը առաջ ուսումը առած Տրց. Տիրան Սամուրեանի, Տրց. Խաչիկ Երէցեանի եւ Տրց. Ցարութիւն Թօփալեանի: Ամեն. Պատրիարք Ս. Հայրը կիսասարկաւագութեան աստիճան շնորհեց բարեշնորհ Տիրացուներուն:

Յաջորդ օր, 31 Յուլիս, Շաբաթ, նոյն եկեղեցիին մէջ, Տապանակի տօնին, ի ժամ Ս. Պատարագի, երեքն ալ ձեռնադրուեցան Աւագ Սարկաւագ՝ ձեռամբ Պատրիարք Ս. Հօր: Յուզիչ էր պահը երբ երեքն ալ ձեռամբարձ եկեղեցւոյ բեմէն կը դառնային ժողովուրդին, ի նշան աշխարհէ իրենց հրաժարման, մինչ դպիրներ կ'երգէին «Աստուածային եւ երկնաւոր շընորհս» սրտագրաւ շարականը: Նորընծաները անմիջապէս սկսան պատարագել Ս. Խորհուրդին:

digitised by A.R.A.R.@